




5





ՂԱՐԻՔ

Գործի ցուցակի համար 5639

891.99
12-47

89
22
✓

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ի



ՆՈՐ ՏԱՐԻՆ

Հրատարակութիւն Կ. ,Հ Ա. Մ.

„Մեծ Քաղաքի“ ճիւղի



1904



5663 30,904

Дозв. ценз. 2-го янв. 1904 г. Петербургъ.

ԼՈՒՈ. մի մրմնջար. քայլիւր հանդարտ, ընկեր, տղամարդի կրծքից թռած հառաչը ժպիտ է բերում չար բախտի դէմքին: Ձիւնոտ այս լեռը պիտի անց կենանք. չէ միւս կողմից է բերում մեզ քամին ողբ ու հառաչի աղեխարշ ձայներ. այնտեղ կասես ձորերն են տնջում. սղմիր քրացանդ թարմ վէրքիդ վրայ, պինդ, պինդ, 'սուաջ քայլենք: Նոր տարին մօտ է. չլինի թէ ա հասնի և մեզ թոյլ, ընկճւած, յուսահատ ղեանի: Տե՛ս, երբ այն սիրուն աստղը պլպլան այս բարձր լեռան կատարին հասնի, այ, այն ամանակ նոր տարի կլինի...

Վերելքը ծանր է, մեր ճամպան երկար, այց շատ ենք անցել: ԼՈՒՈ քայլիւր, ընկեր. ա-աջդ լաւ նայիր. ձեանը չհաւատաս. ինչպէս րբեմն սրտերի քէնը, հոգիների թոյնը մարդիկ անծկում են նենգ ժպիտների խաբուսիկ քո-ով, այդպէս էլ ձիւնի սպիտակ սաւանը պաղ ողեցկուլթեան դաւաճան քօղի տակ անդունդ ծածկում մեր ոտքերի տակ: Այսքան քայլել

ենք և ի՞նչ օրերով, — մեղք է, որ յանկարծ նոր տարուն մօտիկ կուլ գնանք այստեղ մի խորխորատում: Տե՛ս, աստղը հեռու չէ լեռան կատարից. էլի մի փոքր և նոր տարի կլինի. . .

Ի՞նչ ցուրտ է, ընկեր, գիտեմ մըսում ես: Դէ մենակ մենք չենք. քանի՛ քանիսները մեզ պէս մըսում են, դողում սարսուռում. ձմեռ է պատել մեր ողջ երկիրը. ուրբեր, այրիներ դողում են ցրտից, ծերերն էլ իրենց չորցած բազուկներ կծկած ծոցերում՝ դողում, են դողում: Եւ ում որ միսը չի դողում, ում պարարտ մարմինը պատած է ոսկի-արծաթ զրահով, նրա էլ հոգին է մըսում, դողդողում, նրա էլ սիրտն է սարսուռում ահից: Եթէ որ մենք էլ նրանց պէս դողանք, էլ ո՞վ պիտի դիմաւորի նոր տարուն, Տե՛ս, աստղը մօտ է լեռան կատարին, և նոր տարին հեռու չէ մեզնից...

Էլի մըմնջացիր, ցաւո՞ւմ է վէրքդ. կեցիր, իմ ընկեր, թո՞ղ որ իմ շնչով մի փոքր փչեմ, տաքացնեմ նրան: Հաւատո՞ւ, ընկեր, մտերմի շունչին. նա փրկարար է, վէրք է բժշկում, հոգի է տալիս, սիրտ է տաքացնում, բոցեր է վառում: Թո՞ղ, թո՞ղ որ փչեմ այդ վէրքիդ վրայ. հաւատա, հոգիս, այդ հզօր ճար է. այ այս լաթովս էլ կը կապեմ վէրքդ... Այսպէս լին է. այժմ

հանդիստ ես. դէ՛հ բռնիր հրացանդ. փողը դեռ տաք է. պինդ սղմիր ձեռքիդ. լաւ չէ, որ նոր տարին քեզ տեսնի անզէն և անհրացան: Տե՛ս, աստղը մօտ է. էլի մի փոքր և նոր տարի կը լինի...

Մուսյլ է շորս կողմներս, խաւարը, թանձր. լուռ է ամեն ինչ, ասես մեռել է ողջ տիեզերքը. սարսափն է խաղում աշխարհի վրայ, մարդիկ վախում են ձայն տալ իրարի, նոյն իսկ մոռացել են, թէ նոր տարի է գալիս. ցաւերի մեծ բեռը մէջքերին յըրած՝ արիւնոտ շրթունքներով ժրպտում են երկիւղից բռնութեան դէմքին և սարսափի հանդստի մահաբեր ծոցում լռել են, մնջել և սպասում են... Ինչի... հրաշքի... Անմիտի գլխին բարիքով ամուլ ու շար երկինքը միայն շանթ ու փոթորիկ ունի: Եթէ որ մենք էլ նրանց պէս լռենք, ո՞վ պիտի դիմաւորէ նոր տարուն: Դէ՛ քայլիր, ընկեր...

Տես, տես, սիրելիս, ինչ հանդարտ, վստահ սահում է աստղը երկնի վրայ. ցուքերը պայծառ, շողերն իստակ, ասես լողում է անսահմանութեան մէջ մարդկանց ցոյց տալու, թէ ինչ ասել է ազատ, անկախ կեանք նրան չեն հասնում վարի մուսյլն ու սև խաւարը. նա չքգիտէ՝ ինչ ասել է շղթայ. բռնութիւնը չի կա-

րող նրան կանգնեցնել. հպարտ պատռում է խաւարի քօղը և առաջ գնում: Ով կ'ուզի լինել նրա պէս ազատ, նրա պէս անկախ, թող շուտով պատռի քօղը բռնութեան և առաջ գնայ: Քայլենք դէպի վեր. կատարը մօտ է, և հէնց սյնտեղ էլ տօնենք նոր տարին մեր հրացանի տհեղ որոտով...

Դեռ արշալոյս էր, երբ ճամբայ ընկանք: Քանի՜ հոգի էինք, այժմ մնացել ենք երկուսով միայն: Որքա՞ն ենք քայլել. ծանր էր ճանաւարհը ստոր մատնութիւնը բռնութեան արիւնոտ թաթիցը բռնած քայլում էր ուշով մեր չիտից. որքան զոհ տւինք. բուքն ու փոթորիկը խլեցին տարան. ցուրտն ու խաւարը մէկէն կուլուին... Մենք ենք մնացել, մենք զոյգ ըմբոստներ, ի՞նչ փոյթ թէ քիչ ենք. ամեն ընկնողի վերջին հառաչից մենք հիւսել ենք մեր վայրենի երգը. նրանց զայրոյթի թունոտ կաթիլնելով մենք համեմել ենք մեր ատելութիւնը չար բռնութեան դէմ. նրանց մեծ սրտի սրբազան բոցից մի մի շիթ խլած մեր խիզախ ոգու լիւերն ենք հիւսել և սլանում ենք վրէժի շնչով՝ ուր կանչում է մեզ նւիրական պարտքը. մենք կը շահագուհիք յուսահատութեան խռպան, կոշտացած հողը և նրա կրծքին կը ցանենք յու-

սոյ սերմերը արիւնոտ ձեռքով... Դէ՛, քայլիբ,
ընկեր: Մօտ է աստղը: Տե՛ս, երբ նա այս լե-
ռան կատարին հասնի, այն ժամանակ կէս գի-
շեր կը լինի, նոր տարի կը լինի...

Պանգ առ մի փոքր: Այս ինչ պատահեց.
Խաւարը սաստկացաւ, տես, ընկեր, աստղը
ծածկւեց կատարի շհասած. այն մռայլ ամպը
իբր սև ծոցի մէջ կուլ տւեց նրան: Մօտալուս
տարւայ պլպլան նշանն՝ էլ չենք տեսնում. էլ
կայ այս երկրում մի ուրիշ նշան, որ մենք
իմանանք նոր տարու մուտքը. ե՛րբ կը գայ
նա և կը կ'անցնի, այդ մենք այլևս գիտենալ
չենք կարող: Քանի տարի է, որ մենք չգի-
տենք, թէ ինչպէս դալիս է ու անցնում նոր
տարին. թո՛ղ այս էլ անցնի, դնա՛ մեր գլխով:
Բռնութեան ճիրաններում կեանքը մեր երկրում
դարձել է արիւնոտ ժամերի մի շարք. ինչ ա-
սել է այստեղ նոր տարի, երբ օրերը սև են,
հողերը՝ կարմիր... Խաւարը թանձրացաւ. մռայլը
ճնշում է. ցուրտը սաստկացաւ, ասես ժայռերն
էլ են ցրտից դողդողում... Ահա և լեռան կա-
տարը. հասանք վերջապէս: Տես այնտեղ ներ-
շնում սև սև սաւերները. գրւղեր են նրանք.
Ուռ են ու մեռած. աստղի նոր տարին չի կա-
տող տալ նրանց յոյս, կենդանութիւն. երկնքից


իջնող լուսոյ շողերը միշտ փոփոխական են
անհաստատ, ինչպէս երկնքից իջած ձրի շնոր
որով դեռ ոչ ոք երջանիկ չի եղել երկրիս երեսը

Փոյթ չէ այդ, ընկեր. իջնենք վար շուս
թողնենք երկինքը հանգեստ իր տեղում հը
ցանի որոտով պատռենք խաւարը: գնդակի
րոտով խռովենք հոգեհան այս լուսթիւնը. ի
սենք՝ այն լեզւով, որ ամենասոսկալին է բռն
թեան համար, ազատութեան լեզւով, որոտի
զւով, շանթերի լեզւով, կռւի գոռոցի մէջ խ
դենք բռնութեան լալիրշ քրքիջը. քանդենք ս
գիւղերի լեզւի կապանքը. մի փոքրիկ կայծ ո
նենք նրանց շրթունքներին. մի փոքրիկ բոց ո
նենք նրանց սրտերում. շորացնենք այնտեղ
ցի աղբիւրը. և այն ժամանակ մենակ չենք ս
նայ, և այն ժամանակ կը դայ նոր տարի
մեր փրկարարը. փոյթ չէ՝ թէ աստղը ծածկ
ամպերով. փոյթ չէ, թէ երկինքը կորչի խ
լարում...



10605
30907
A 5663
30907

1500
1500



2522

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041152

I
5663